



Նական է մարդուս՝ իբրև էակ բանաւոր, առթիւ նոր տարևորական չրջա-  
նի, բարոյախօսել ընդ անձն. և իբրև ազգի մը և ընկերութեան անդամ՝  
ընդարձակել իւր տեսութիւնը, խորհել ընդ ազգն, անոր բարոյական ա-  
ճումն ու յառաջխաղացութիւնը քննել, կշռադատել զայն այլոց ազգաց հետ,  
զներկայն ընդ անցեալն, և իւր բարօրութիւնն ու պատիւը ազգին ամբողջու-  
թեանն հետ կապակցեալ գիտնալով՝ ըստ լրման յուսոյն և անձկութեանցը՝  
բերկրիլ կամ սրտաբեկիլ:

Սոյն բնական և սրտեռանդն զգացմամբ՝ յաւիտենականութեան անհուն  
ասպարիզին մէջ քայլ մ'ալ նիւթապէս յառաջ ընթացած ժամանակնիս՝ մտա-  
ծել կու գայ մեզի թէ արդեօք իբրև ազգ՝ ուղիղ տեսութեամբ անմուլար դէպ 'ի  
կէտ մեր նպատակին կը դիմենք, թէ ժամավաճառ կ'ըլլանք անօգուտ խոտոր-  
մամբք և խուզախնդրութեամբք. և թէ արդեօք աւելի զօրաւոր ենք հիմա մեր  
ընթացից մէջ, որ է ըսել թէ արդեօք մեր նախընթաց տարիներն աւելի ոյժ  
տուած են մեզի արիութեամբ ևս և վարժութեամբ ընթանալու: Այո՛, մեծ դի-  
տելու իր մ'է այս. վասն զի ներկայն անցեալէն կախումն ունի, ինչպէս տարին  
իւր օրերէն, օրերը ժամերէն և ժամերը նախընթաց վայրկեաններէն. որով ժա-  
մանակի հարմարման կարգին մէջ մէկ վայրկեանն իսկ՝ ըստ որում կապ և լրումն  
ամբողջութեան, անգին աժէք ու յարգ ունի, մանաւանդ թէ յաճախ օր մը՝ ժամ  
մը և վայրկեան մը ինքնին սերմն է և պատճառ. բիրուց բարեաց, ծնող իմաստուն  
խորհրդոց և պարզևատու երջանկութեան: Այսու և ապագայն՝ անհրաժեշտ ընդ-  
իշխանութեամբ է անցելոյն, և այնպէս մէկմէկով հիւսեալ և շարսյարեալ են  
ներկայն և ապագայն, կամ որ նոյն է ըսել անցեալն ու ներկայն, որ չենք կրնար  
մէկուն վրայ մտածել առանց զմիւսն յիշելու, կամ չենք կրնար գործել առանց

նախնոյն ազդեցութիւնը կրելու, ըստ այսմ, եթէ բարի է անցեալն՝ բարի է և ներկայն և ապագայն. եթէ լի ողջամիտ խորհրդովք և զործունեայ եղած է անցեալն, ըստ այնմ է 'ի ներկային անկէ յուսացուելիք արդիւնքը, վասն զի բնութեան կարգին մէջ ոչինչ յանկարծ վատթարանայ կամ լաւանայ. ամենայն ինչ՝ ինչպէս իր ծագումն, նոյնպէս իր խմբումն ու երկունքն ունի. չկայ անկումն յանակնկալս, ինչպէս որ չկայ կանգնումն առանց յառաջընթաց ճգնաց և ջանից: Եւ ահա տարիներն իբրև նշանակիչ ժամանակակէտեր են, կամ մեր ժամանակին բովանդակ պարբերական ընթացից իբրև վայրկեաններն են, յորս կը վերկենցաղի և կը բարեդարդի մարդկանց՝ ըստ այնմ և ազդաց բաղդը:

Տարակոյս չկայ թէ նշունաւոր ժամանակի մէջ կ'ապրինք, յաջորդաբար մեծամեծ եղելութեանց հանդիսատես ենք. կը տեսնենք չորս կողմերնիս անդադար յեղափոխութիւնք՝ որոնք դարուց երկունք են և արդիւնք. մեծամեծ յաղթանակք գիտութեանց և մեծամեծ միութիւնք գաղափարաց, մէկու մը հանձարոյն և պայծառ ըմբռման, և այլոց առ հասարակ յարատե անխոնջութեամբ զայն արդիւնաւորելուն՝ հետեանք: Յանակնկալս չեղաւ երկրորդական համարեալ ազգութեանց մեծ միտպետութիւն ձևանալը, կամ թէ ըսենք ըստ բազում գլխոց հիմնական յառաջադիմութիւն ստանալը. այլ հեռատես և խորաքնին աչք պէտք էին կանխաւ տեսնել անոնց ստանալիք վիճակը, ինչպէս որ կրնանք նախատեսել նաև ներկայ քանի մը փնասակար սկզբամբքն ու մղմամբ ուր յանգիլը: Պատմութիւնը մեզի կը վկայէ թէ զլխաւորապէս մէկու մը կանոնաւորած ոճոյն (մէգոտին), և ըստ հարկի ժամանակին՝ յաջորդաց իրենց տեսութեան կէտին պատշաճ յաւելումովք զայն մինչև ցարդ շարունակելուն հետեանք ըլլալը, որ է ըսել՝ գրեթէ դարու մը գործ: Նոյնպէս կ'ըլլան և ըլլալու հետ են և այլոց ազդաց վերանորոգութիւնք, մեծ գաղափարի մը ծնունդ և ճարտար ու ճկուն շրջագծով և մէգոտով միշտ առ նոյնն աշխատելու արգասիք: Ասոնց հակառակ եթէ ընկան մեծագոր և մեծաճոխ ազգութիւնք՝ է շեղմամբ հետզհետէ յուզիղ և հիմնական սկզբանց. և հարկ է խոստովանիլք որ ոչ այնչափ պատերազմունք՝ որչափ աւելի ներքին անդաման և ծածուկ քայքայմունք, խաբէական բարգաւաճմանց երևոյթ առնելով՝ են բուն թշնամիք՝ պատճառք կործանման և կորստեան այն ընկերութեանց և ազգութեանց թէ բարոյական և թէ նիւթական իշխանութեանը. որով՝ բոլորովին յանկարծական համարեալ աւերմունքն ու սուգանքն իսկ՝ շատ 'ի ներքուստ և առաջուց իրեն ծածուկ կեղծելիք որդն ունի: Եւ միթէ ամենայնի հեռաւոր աղբերակն և խոր արմատը փիլիսոփայական ճշգրութեամբ հետազոտելուն վրայ չէ հին և նոր ազդաց պատմութեան կարևորութիւնը, որ այնչափ ախորժ և օգուտ կը մատակարարէ ուսանողաց:

Անակնկալ չհամարուին նաև կերպ կերպ հրաշալի և կենցաղօգուտ գիւտեր՝ որչափ ալ շատ անգամ մէկ վայրկենի կամ րոպէի պայծառ ըմբռնողութիւնք ըլլան, այլ շատ և շատ ուսումնական քննողութեանց, և միտքն ու դատողութիւնը խաղուն ու բանուկ վարժեցնելու հետեանք. . . . Ուրեմն եթէ շատ կանխաւ և տարեք կը պատրաստուին յառաջադիմութիւնք, նոր տարին՝ իբրև նոր յարմար ժամանակ է բարոյական անկագործութեան և անցիլոյն հասուցած հունձըր քա.

ղելու . բուսարբերութիւն մը՝ որուն տոհմականը դարուց 'ի դարս կը վայելուին .

Արդ գտունանք ու հարցընենք թէ տրդեօք ինչ պողաբերեց Աղդին անցեալ 1875 տարին և ինչ սերմանեց ապագային համար իր անցելոյն մէջ : Վայելեց ինքը անցելոյն մէջ իրեն համար երկնուած շատ բարիք , որոնց համար պէտք է երախտագէտ ըլլայ , իսկ ինքն ինչ բարիք պատրաստեց իւր հանդերձեալ սերունդոց : Հոս դառնանք ու մտածենք կ'ըսեմ , որ եթէ իւրիք կազակցինք մենք մեր յառաջագիւծեան ասպարիղին մէջ , և իբրև ազգ հակայօրէն չքայլեցինք ուսմանց և արուեստից ամենայն առաջից մէջ , այս ալ դժբաղդարար ստիպեալ ենք ըսելու , մեր նախընթաց պակասաւոր և անոճ բարոյական բանակայարդարութեան տուգանքն է զոր կրեցինք . և եթէ մեր ընթացքին մէջ յաւելորդս զեզերեցանք 'ի միութենէ և յետս կեցանք համաշունչ և միախոհ ողուով 'ի նոյն վախճան աշխատելու եղբայրակցութենէն . եթէ անձնահաճ կրքեր զմեզ զարտուղեցուցին օրինաւոր ճամբէ և իբրև նոր անցք մը բանալ տունն անսանձ և անկանոն՝ որով և գահավէժ ընթացից , խոտտովանելու ենք կերպով մը 'ի չքմեղանս մեզ և 'ի յորդոր և 'ի համոզումն զգաստութեան՝ թէ անցելոյն բոցած վերքը կամ խրամատն է 'պատճառ , զոր մեծ իմաստութիւն է գիտնալ կարկատել ու զարմանել , և ոչ թէ դարմանել կարծած ժամանակնիս՝ աւելի ևս լայնել ու զայրացնել : Համառօտ ըսել , եթէ չլծեմ լեցուցինք հասարակաց բեռը մղելով միանձեռն նախապաշարմանց զանգուածը՝ այսժ ամենայնի պատճառ , կը կրկնենք դարձեալ , մեր չղինուորիլն եղաւ՝ 'ի յաղթանակ զարգացման հայրենեաց՝ ճշմարիտ և անշահասէր ազգասիրութեամբ , զոր ազնիւ և յառաջեցուցիչ դաստիարակութեան գործն է հաստատամիտ համոզմամբ տողորել սրտերնուս մէջ :

Ոճով և ըստ կարելոյն ժամանակիս յարմար կատարեալ բարոյական բանակայարդարութիւն . ահաւասիկ ուրեմն անհրաժեշտ կարևորն մեզի համար , առ որ ձգուինք ազգային իւրաքանչիւր անդամքս յամենայն հեռաւորութենէ և յամենայն վիճակէ , մտաց աչօք նկատելով առ ճշմարիտն լուսաւորութիւն և բարօրութիւն առաջնորդող գրօյը , որուն հրաւիրանիչք պէտք է ըլլան մեր նախնի պայծառութեան դարուց նկարագրոյնք , և յորդորաձայնքն աւնանաւոր Ռպատակուորիլն և իմաստուն գործունէութիւն : իսկ կենդանական օյժ այս ցանկալի կազմաւորութեան՝ օրէնքն են և կանոնք , յորս նախարմատ պէտք է ըլլան բնականքն և կրօնականք , և ապա ընկերականքն և ազգայինք . և օրինաց աւանդապահքն են իշխանաւորք , որոնք արթուն աշարջութեամբ պէտք է հսկին ազգին բարւոյն՝ օգնութեամբ ուրիշ անձնանուէր ընկերութեանց , որոնք ամենն ալ աստիճանաբար մէկմէկու զօրծոյն նպատեն քաջ վարչութեամբ զլիտոց , դիւրացնեն զայն և զարգացնեն , և ամենայն ջանք 'ի մի վախճան վերբերեն , համեմատելով միշտ զգործն օրինաց պահանջածին հետ , և անաչառապէս ըստ հարկին դատաւոր ըլլալով հասարակաց , օրով երկնքնն արդեամբ և օրինակաւ իրենց 'ի բոլոր սրտէ յարգելն ու սիրելը զօրէնս և զկանոն :

Մէր և մեծարանք օրինաց , և ահա այս իսկ ինչպէս ազգութեանն՝ 'ի մանկութենէ 'ի վարժոցի կը տպաւորուի սրտերնուս մէջ . և առ այս առաջին և վերջին ու միշտ կարևորն է ուղիղ և կանոնաւոր դաստիարակութիւն , որ է մեր բարոյական բանակին իսկական ամրութիւնը : Ուղիղ և կանոնաւոր դաստիարա-

կութիւնն է որ քաղաքական վարչութեան հըռ և իմաստուն հպատակներ կը հանէ, և հայրենեաց ազնիւ և օգտակար քաղաքացիներ ըստ այլ և այլ ճիւղի կրօնքն ու բարոյականը կը պահպանէ՝ որով և զպատիւ անձանց, միով բանիւ՝ զմարդ կը կատարելագործէ : Եւ միթէ չունինք մենք լիովին մեր մանկութեան ու ազդութեան այս պէտքը հոգացող վարժոցներ և նուիրական գործանոցներ, յորս մեր մանկտին վարժին յարգել ու սիրել զօրէնս և զկանոն, և ձուլուին իբրև իրենց երկրորդ բնութիւն ընելով զայն :

Հոս ներուի մեզ խորհրդածել թէ այս նկատմամբ շատ նուազ ու պակասաւոր է ունեցածնիս, որով տկար է նաև և ոչ ըստ ամենայնի անխոտոր մեր ազգային յառաջագիմութեան ընթացքը տարեաց շրջանին մէջ : Նուազ և պակասաւոր կը համարինք քանի մը նոյնատեսակ վարժարանները նկատմամբ ազգային յառաջագիմութեան : Ոչ, ոչ . մարդկութեան և՛ մանկութեան պէտքը բազմակերպ է, ըստ այնմ՝ անոր ըլլուելիք նպատան ալ պէտք է բազմակերպ ըլլայ, ուրուն համար կանոնաւոր դարման և առաջնորդութիւն կ'ուզէ մանկութիւնը, ապա թէ ոչ՝ անկանոն կը մեծնայ ըստ ամենայնի : Երբ վարժոցք իրենց աստիճանին համեմատ չեն և ոչ աղէկ կարգադրեալք՝ չեն կրնար յառաջագիմութիւն պատճառել, և ոչ իսկ կարգն ու կանոնը սիրելի և յարգելի ընել, որով և համբալք չեն ըլլար ըստ ժամանակին բարեկարգ անձինք, իրենց ընելիքը գիտցողք և յառաջեցնողք, այլ կ'ըլլան ցրուեալք, նորօրինակք, անձնահաճք և անասնձք : Բաւական չէ ուրեմն ազգին քանի մը լիկէոնի նման վարժարաններ ունենալ, այլ պէտք է առ այնս զմանկունս պատրաստել : Մայրենի դաստիարակութեան նախ քան զամենայն պէտք է փոյթ տանիլ, յարգելով ու մշակելով զայն իբրև հիմն կրթութեան : Ետոյ նախնական կամ տարրական դպրոցներ պէտք է ունենալ, աստիճանաբար զարգացընել զմանկըտին՝ գիւրընտել ընելով ուսումն ու կանոնն անոնց մատղաշ մտացը, յորում պէտք է եւրոպական ազգաց օրինակին հետևելի, որք զանազան փորձերէ յետոյ ընտրելագոյն ոճ մը ստացած են : Այո, 'ոգի' ՚ի բռին և ազգովին ջանալու ենք այս նկատմամբ, բնական և սիրելի ընելու տղոց զուսումն անդասին յառաջին հասակէ, տարրացընելու և տողորելու զայն : Եր տեսնենք փորձով որ բաւական ժամանակ օտարախորթ բան մ'են ուսման ու առաքինութեան անուանքն իրենց համար . իբրև թի՛նամոյ՝ այնպէս հետուէն կը նային անոնց . իրենց բնութեան տնկակից նախապաշարմանց ազդեցութեամբք՝ իբրև ըստ ամենայնի դժուարին և ծանրաբեռն կը համարին, ուստի և կը խուսեն . և այնչափ մեծ է այս փաստակար տպաւորութիւնը մտաց վրայ՝ որ զգիւրիմն իսկ կը կնճռեն կը դժուարացընեն այլ ընդ այլոյ մտածութեամբք և երևակայութեամբք, գոգցես կարծելով թէ կերպով մը անըմբռնելի ինչ է ուսումն, և չարատանջ իր՝ առաքինութիւնն : Մերձաւորենք ուրեմն զայնս մանկական մտաց, սիրելի և հաճոյ ընենք՝ ինչպէս որ են իսկ ստուգապէս . և ահա մէկ մ'որ համն առնուն՝ ալ միշտ այնու կ'ուզեն սնանիլ, և բան մը կարող չէ զիրենք կասեցնելու : Յիշենք միշտ թէ որ և իցէ զպրոց այնպէս կարգաւորեալ և յարդարեալ պիտի ըլլայ՝ որ ամենայն ինչ հոն օգնեն տղոց բարւոք զարգանալուն, գերագոյն գեղեցկին և հաստատուն բարւոյն ցովումները ճառագայթեցնելով իրենց մտաց ու սրտից վրայ . գործանոց մ'է, ուր ամենայն կազմած յատկապէս առ իւր պէտս՝ ա.

աանց ծախուց ինայելու , անհրաժեշտ հարկ է որ գտնուի , որուն հարկ է նաև դիտել մեծապէս առողջ օղն ու հովահարութիւնն և առանձնոց ըլլալը , հետի 'ի ցնդող պատճառաց և 'ի խորթ օրինակաց :

Եւանդուն ջանքով և յարատև անձնանուիրութեամբ վարենք մեր մարզա-  
րաններն ու լիկէոնները , և աղէկ մեղրտով յառաջադիմութիւնը դիւրացնենք ,  
միշտ յիշելով և յիշեցնելով այն ոսկեղինիկ առածը թէ Շատ շաւք , շատ կանո-  
նաշորտաքիւն 'ի ջաւս և շատ հաստատարտաքիւն 'ի կանոնաշորտաքեան <sup>1</sup> , և  
առ այս օգնեն ճարտար և հմուտ հանրակարգով , ճշդիւ առանց ծանրաբեռնութեան  
և պայծառ շարքով ուսումն և գաղափարաց ուղղեծուծն աւանդող դասադիրք , որք  
և ըստ տարեաց ուսումնական ընթացից պէտք է և ևս ընդարձակին և դիտութեանց  
խոր գաղտնիքը և կարևոր մանրամասունքը ծանուցանեն , զանգելով և ևս նոյն  
ուսումը մտաց մէջ : Յայսմ մասին շատ սխալ սկզբունք է հարեանցի անգամ մը  
միայն մէկ տարուան կամ քանի մը ամսուան մէջ՝ այս ինչ կամ այն ինչ գիտութիւնը  
բովանդակելով 'ի միտս աշակերտաց՝ վերջացնել զայն , մինչևեռ յԵրոպա ամե-  
նայն ազգք ըստ հասակի և կարգի միշտ հետզհետէ կը բարձրացնեն որ և իցէ  
գիտութեանց դասախօսութիւնը , մինչև որ արժանի համարուին ուսանողք 'ի  
համալսարան անցնելու զանազան տարեաց խիստ քննութեամբք , որոնց կերպն  
ու ոճը նոյնպէս մեզի համար պէտք է մեծ դիտողութեան նիւթ ըլլայ . և կը  
կայանայ այս գլխաւորապէս՝ առաւելագոյն քան զմեր հարցաքննութիւնքը՝ մըր-  
ցանաց և հետամտութեանց ձև տալուն վրայ այս քննողութեանց , և աշակերտ  
մը ջանքընելուն վրայ յաջորդ տարւոյն նոյն ուսմանց բարձրագոյն դասախօսու-  
թեանցը՝ մինչև որ առաջիկայ տարւոյն իրմէ պահանջուածին մէջ քաջ փայլած  
չըլլայ . և այսու է որ գիտութիւնն ու ուսումը խոր արմատ կը ձգեն Երոպացւոց  
մտաց մէջ : Դիտելու կէտ մ'ալ է դարձեալ որ չժողովներ իմաստութեան տաճա-  
րին գաւիթներուն մէջ խառն ամենացզի համբակք , որչափ ալ համարինք թէ տար-  
րական դպրոցներէ անցած ըլլան , այլ ըստ նպատակի վարժոցին՝ զոր քաջ ըմբռնել  
և միշտ յիշել պէտք է , ըստ կոչմանն և յարմարութեան ընտրենք մեր առնելիքը ,  
որով մեր միահարթ տարեբացն համեմատ՝ իբրև հասարակաց աւանդ ընձեռենք  
զգիտութիւն 'ի անունդ պատքեկոց : Ի սոյն նիւթապէս կը համոզէ զմեզ և տըն-  
տեսական գիտութիւնն Բաժանուորն աշխատութեան վարդապետելով , իբրև  
միակ համառօտագոյն և օգտակարագոյն հնարք ընտիր կազմութեան ձեռա-  
կերտին :

Ի՞նչ իմաստութիւն է վարչաց և առաջնորդաց՝ պակասութեանց և բեր-  
մանց աստիճաններն աղէկ զանազանել մէկմէկէ . ըստ այլ և այլ բնութեան և  
խառնուածոց՝ դարմանոց և վարժոցի կերպն ալ կը փոխուի : Յայսմ ևս օրինակ  
ըլլայ մեզի Երոպա , յորում շատ կերպ դպրոցական տեսակք կան . սովորական  
երեք աստիճանի վարժոցներէն զատ , որք են նախնականը , մարզարանն ու հա-  
մալսարանը , անպակաս են շատ քաղաքաց մէջ դպրոցք վասն ստահակ և ախ-  
տաւոր տղայոց , որք եթէ ուրիշ դպրոցաց տղայոց հետ խառնուին՝ կը խանգա-  
րեն առ հասարակ և զլաւարարոյս . թողունք արուեստական , վաճառականա-

1 Multus labor, multa in labore methodus, multa in methodo constantia.  
P. CAMPAN.

կան, երկրագործական, նաւատական բարձր ու միջին դպրոցները, և յիշենք առաւելագոյն նախանձով և փափաքանգը ուսուցչի և դաստիարակի պաշտօնին գաղտնիքն ու արուեստը սորվեցնող վարժարանները: Այս է ահա 'ի վեր քան զամենայն կարեւորագոյն մեզի համար ալ, լուսամիտ՝ ազնիւ և վարժ ուսուցիչներ և կրթիչներ ունենալ:

Երանի մեզ եթէ ներկայ տարիս արգասաւոր ըլլայ շատ մը ազգային բարեգործութեամբք, եթէ հիմնարկէք ընենք յայնմ, ինչպէս անցեալ տարի և վերջին քանի մը տարեաց մէջ, ազգին զանազան կերպ պէտքը լեցընող ուսումնարանաց, ինչպէս նաև կուրանոցաց, որբանոցաց, անկեղանոցաց և այլոց սոյնպիսեաց. և ապահով ըլլանք որ թէ 'ի ներկայումս, բայց ևս առաւել յապագայս՝ բիւրաւորաց օրհնութիւնը կը ժառանգենք. եթէ միանանք երկրագործական մշակութեան և հնախուզական քննութեանց ընկերութիւններ հաստատելու. եթէ արուեստական և մեքենական կերպ կերպ գործանոցներ (ասուի, շաքարի, երկաթեղինաց, մոմեղինաց, և այլն) սկըսինք ունենալ, և մեր և աղքատին առօրեայ կացութիւնը բարելաւընենք. եթէ նոյնպիսի աղէկ սկըսեալ գործերն յարատեալբար շարունակենք: Երանի մեզ եթէ դաստիարակութեան ամենամեծ փոյթ ունենանք. եթէ ոչ միայն չարհամարհենք զուսումն, այլ և աւելի ևս պաշտպան կենանք իբրև կարող և մեծատուն՝ ուսելոց. եթէ չզանդաղինք նոր հնարագէտ և գովելի շաւղաց համեմատ կրթելու մեր մանկըտին, մանաւանդ 'ի տարրականին՝ ինչպէս կանխաւ ակնարկեցինք, կորդ չթողլով մտքերը մինչև յաճումն հասակի, այլ ջանալով որ ուսման և կրթութեան տարեբաց մէջ բանան աշուրնին և կաթին հետ ծծեն զայն, որպէս զի յետոյ տաժանական չըլլայ՝ չըսեմ ըստ իւրք անհնարին, դաստիարակութեան զանազան ստեղծուքը այն մտաց վրայ պատուաստել. պատուաստ մը, որ ժամանակէն դուրս յաճախ հինցած և այլ հիւթովք լցուած բունին վրայ չընդունականար: Երանի մեզ եթէ մտաւորական մշակութեան ասպարիղին մէջ գրականութիւնը իբրև սոսկ շահավաճաւ չընելով, չհայացնենք եւրոպական առ երեսս քմահաճոյ դրութիւնքը որոց 'ի խորս չկայ ոչ սէր կարգի և օրինաց և ոչ ընկերութեան, և մեր սերնդոց սրտերուն մէջ կրօնից և պարսոնց նորածիլ բողոքները չխամբենք. եթէ քաջ ըմբռնենք որ զլիաւորապէս աստիճանաւոր և ընտիր դասադրոց պէտք ունինք, և ժողովրդական կրթիչ և ուսուցիչ դրեանց, և առաջին կարգի աշիւ և հանճարեղ մատենագրաց թարգմանութեանցը, որոնցմով և ևս ազնուացնենք և գերաթռիչ բարձրացնենք մեր միտքն առ վեհագոյնս. և այսմ Շուետը մեզ օրինակք, որ ամենայն ազգաց ներկայ ընտիր գասագրեանքը թարգմանելով և ինչ ինչ յառաջին կարգի և օգտակար մատենագրաց, պայծառացուցած են ըստ բաւականի իրենց դպրութիւնն ու ազդութիւնը: Երանի մեզ եթէ չըլլայ մեզի համար օրէնքն գիր մեռնալ, այլ պաշտենք զօրէնս, գիտնալով թէ պէտք է օրւնք տիրեն մարդոյ. եթէ աղէկ հիմն դնենք ըստ հարկին նոր ընկերական օրինաց, և ամենայն ճշդիւ մեր պարագայիցն ու պիտոյիցն համեմատ իմաստնախոհ անձանց բարեձևել ու մեկնաբանել տալով զայնս՝ բանադատենք զմեզ 'ի ներքոյ նորանոր կարգադրութեանց, ինչպէս կ'ընեն և ամենայն արևմտեան ընկերութիւնք և ազդութիւնք. որով և արևելեան մեր բացարձակ

իշխանական ոգիէն հրաժարելով՝ որ անսանձ կ'ուղէ ազատ ըլլալ յամենայն կապոյ՝ սիրող և լող ըլլանք յամենայնի կարգաց և կանոնաց ձայնին : Երանի՛ մեզ եթէ ինքնին իսկ իբրև առաջնորդ՝ օրէնքը պաշտենք, և 'ի հեռուստ և 'ի մօտուստ ապագային և ներկային բողբոլ լեւու կասկածով արթուն ըլլանք օտարոտի ոգւով լցեալ խորհրդատուի մը կեկծուպատիր խորհրդածութիւններէն չկախարդուելու : Եթէ գիտնանք համբերութիւնն ու լուսութիւնը անզգայութիւն չհամարիլ, իւրաքանչիւրոց կարողութիւնն ու յարմարութիւնն ազէկ գործածել : ոչ զգացմամբ դատել ու գործել միայն, այլ և մտք և խոհականութեամբ, ողջ և նոր գաղափարներով անձինքն յարգել՝ որպէս զի անոնցմով լուսաւորեալ մենք վարենք զիրս և ոչ թէ վարինք յերաց և 'ի խնդրոց հեղեղէն : Երանի՛ կ'ըսեմ և բիւր երանի եթէ ժողովներ ու յանձնաժողովներ ունենանք որ ժրութեամբ գործեն և հասարակաց կարծիքն ու գանդատները չարհամարհեն, չմուսալով որ տարբաբանութեան է դարս և ամենայն ինչ նիւթական ու քարոյսական պէտք է լուծել, ընտիրն առնուլ ու պիտանի ընել նորանոր բազկացուցութեամբք : Եթէ մեզի յանձնուած գործոյն ծանրութիւնն ու մեծութիւնը աչէկ ճանչնանք և նոր կապուած մը չընենք անգործութեամբ մեր հայրենիքը կամ գերդաստանը անոր 'ի կենդանութիւն չգործածելով ու ջլատելով մեզմէ կախումն ունեցողները : Երանի՛ կ'ըսեմ և բիւրիցս երանի եթէ իբրև հպատակ՝ հաւատարիմ օրինապահ ըլլանք և կարգապահ՝ քան թէ օրինադիր և կարգադիր, եթէ հին ժանգերը սրբենք, միմեանց յառաջադիմութեան չմախանք, կուսակցութեանց չծառայենք կամ լու ևս ըսել գլուխ չըլլանք արբանեկաց ձեռք մեր կարծիքն յառաջեցնելու, եթէ գիտնանք որ այնպէս ոչ շուտ կը կորսնցնենք ամենայն կարծիք մեզ 'ի նպատ, և չտարակուսինք որ արդէն իսկ բազմաց մտաց մէջ բարոյսպէս կորուսած ենք համարումն ու վատահումիւն : Վերջապէս, բիւրիցս մեզ երանի՛ եթէ իբրև ազգ մի բովանդակ ձեր և երիտասարդ, մեծատուն և գործաւոր, ուսուցիչ և ուսանող, աշխարհիկ և եկեղեցական՝ ոգւով միշտ գործենք և միով ոգւով, ըստ առածին, թէ Զօրութիւնն 'ի միութեան է : անշուշտ ըլլալով որ չյառաջադիմենք՝ ետ միլի է, և թէ ամենքնիս ալ մեծ պարտք ունինք ըստ մերում վիճակի՝ առանց մէկմէկու գործոյն միջամուտ և շփոթիչ ըլլալու, ըսել կ'ուզենք, ամենքնիս ալ ճշգրտութեամբ մեր իրաւանց սահմանը գիտնալով՝ պիտանի ըլլալու մարդկութեան և հայրենեաց : Այսչափ և այսպիսի վերանորոգութեամբք ցանկալի և պաշտելի պիտի ըլլայ յուսանք առաջիկայ տարւոյս յիշատակն ալ յապագայս :

Ուրեմն յառաջ... մենք չենք սրտաբեկիր բնաւ : այլ յառաջ, բնութեան Արարչին այս կրկին զմարդ ոգիաւորող ձայնին ազդեցութեամբն՝ որ կը լսենք միշտ 'ի խորոց սրտիցս՝ կը քաջալերուինք մեր նախնեացն ու հարց սկըսած գործը յառաջեցնելու, նորանոր խրախուսիչ օրինակներ ալ տեսնելով ու լսելով, և անցիւրց առսքինի և մեծագործ հայրենասիրաց յիշատակը մտքերնիս նորոգելով, որոնց անունն օրհնեալ է ու պատկառելի, սօն ազգային ուրախութեան, որուն հաւաստիք են ազգք և ազինք իրենց չքնադադիւտ հանճարից դարադարձերը հանդիսացնելով, երբ ժամանակին հարիւրամեայ բոլորակին վրայ իբրև անժախելի աստեղունք փայլող այն հանճարեղ ոգւոց հանդիպելով՝ կ'ողջունեն

դիրենք զեղմամբ սրտի և բամբուջ նուագաց իբրև իրենց բարերարքն ու պայծա-  
ռացուցիչքը :

Նոյնն ըստ ամենայնի և անբացատրելի կերպով կը զգանք մենք այ առաջի-  
կայ տարուոյս փետրուարի 6-16ն յիշելով : Օր մը՝ յորում յանկարծ երկերիւր  
տարի յետս փոխադրուելով (1676) կը գտնենք զմեզ անշուք խանձարուրքի մը  
քով, որ մեր երևակայութեանն առջև իր կենացն աստուածային և հայրենեաց  
սիրոյն կայծերովը բորբոքեալ վեհալայր մ'է և նուիրական սրբարան : Որդիա-  
կան երախտագէտ յարգանք կը խոնարհինք այն խանձարրոց առջև, և շնորհալից  
նորածին ՄԱՆԿԱՆ-ՄԻԻԹԱՐԱՅ ապագային վրայ սքանչացած ժամանակնիս՝  
կ'օրհնենք ամենայն մխիթարութեանց աղբիւր և մատակարար վերին Տեսու-  
թիւնը, որ կ'ուզէ վերբերել զմեզ յանակնկալս յերկրաւոր օգոստափառ սին  
անուանոջ՝ առ իւրն իսկական վերնաքաղաքն Սեբաստէ, մատնանիշ ընելով մեզ  
'ի կրկիսի աշխարհիս և յանդամակցութեան ազգի՝ իւր ընտրելոց օրինակը . յո-  
րոց մի է և մեր վենետիկոյ Հայ-ազգային Միաբանութեան նախահօր և ազգեր-  
նուս լուսանորոգ Եառային Աստուծոյ ՄԻԻԹԱՐԱՅ ԱԲԲԱՀՕՐ աստուածասէր և  
ազգասէր կենաց քաղաքավարութիւնը . որուն յատուկ ներբողեան մ'ալ զոր տա-  
րուէ տարի սովորեալ ենք նորոգել մեզ 'ի խրախոյս, պարտք կը համարինք այս  
տարի առանձինն 'ի դիր դրոշմել վասն հասարակաց, և դովեստիւք մեր սրբա-  
կաց, իմաստուն և արդիւնաշատ Հօր՝ առաջին և վերջին դիտումնիս է օր-  
հնել և դժգոբանել ամենայն սրբութեանց, իմաստութեանց և արդեանց Հայր  
զԱստուած :

Հ. Դատիք Վ. Նազարեք

